



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ի Թ Յ Ա Ն  
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ**

« \_\_\_\_\_ » 2017թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

**Ո Ւ Ղ Ե Ր Ձ**

**Հ Ա Յ Մ Ա Մ Ո Ի Լ Ի Օ Ր Վ Ա Կ Ա Պ Ա Կ Ց Ո Ի Թ Յ Ա Մ Բ**

Զանգվածային լրատվության բնագավառի հարգելի՛ աշխատակիցներ, ի սրտե շնորհավորում եմ Ձեր մասնագիտական տոնի՝ Հայ մամուլի օրվա կապակցությամբ:

Մամուլն այն կարևոր օղակն է, որը հասարակությանը տեղեկատվություն հաղորդելուց զատ կարողանում է վերլուծել ու վեր հանել տարբեր բնագավառներում առկա հիմնախնդիրները, բարձրաձայնել դրանք, մտահոգություն հայտնել ու նաև լուծումներ առաջարկել:

Հայաստանյան լրատվամիջոցների այսօրվա գործունեությունը վկայում է այն մասին, որ մամուլը մեր երկրում կայացած կառույց է և հասարակական-քաղաքական, պետական կյանքին լիարժեք մասնակցություն ունի:

Հարգելի լրագրողներ, օգտվելով առիթից ցանկանում եմ, որ ձեր անաչառ ու անկողմանակալ գործունեությամբ նպաստեք երկրում ժողովրդավարության զարգացմանն ու քաղաքացիական հասարակության կայացմանը:

Բոլոր լրատվամիջոցներին մաղթում եմ ստեղծագործական հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ:

**Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**